ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

_____Հայոց լեզվի և գրականության__
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Բաբուռյան Հ. Ռ. /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № __2__

«__12__» __սեպտեմբեր__ 2023 թ.

ՀԼԳ /բ -065 «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-19-ՐԴ ԴԱՐ-2» ԴԱՍԸՆԹԱՑԻ
Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ **011401.00.6-Մասնագիտական մանկավարժություն**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **011401.19.6-Հայոց լեզու և գրականություն**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը

Որակավորման աստիճան՝ **Մանկավարժության բակալավր_____**
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ **հայոց լեզվի և գրականության**
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ **__հեռակա_____**
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ հեռակա **3-րդ կուրս, 1-ին կիսամյակ**

Դասախոս(ներ) ՝ **__ Արտակ Սարուխանյան____**
/անուն, ազգանուն/

Էլ.հասցե/ներ_**hasmik.63@gmail.com__**

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2. Հարցաշար
    - 14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].**

«Հայ գրականության պատմություն /19-րդ դար-2/» դասընթացը կարևորվում է բանասիրության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

2.1. Դասընթացի նպատակն է գրականության պատմություն զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:

- Գրապատմական չափանիշների հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:
- Դասընթացում կարևորվում են համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից:
- Ձեռք բերված գիտելիքները վերլուծելու կարողությունների ձևավորում տարբեր իրավիճակներում:

2.2. Դասընթացի խնդիրներն են.

- Սովորեցնել հայ գրականութան տեսական հիմքերը:
- Բացատրել գրապատմական իրողությունների օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռք բերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին կատարել համակարգված հետազոտություններ,վերլուծել և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների:
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել գրական երկերի առանձնահատկությունները բնագրերի համատեքստում:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները.**

«Հայ գրականության պատմություն /19-րդ դար-2/» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների նախնական գիտելիքների, կարողությունների, հմտությունների առկայությունը, հայ գրականության պատմության նախընթաց շրջանների իմացությունը:

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2].

«Հայ գրականության պատմություն /19-րդ դար-2/» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա գրականության պատմության տեսական հիմունքները,
2. իմանա երկի ուսումնասիրման մեթոդական հիմքերը
3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
4. տիրապետի գրական երկերի հետազոտության մեթոդներին,
5. կարողանա կատարելեզրահանգումներ, չափանիշների համապատասխան
6. կարողանա գիտական հարցերի շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

<u>Ա) Ընդհանրական կոմպետենցիաներ</u>

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

<u>ԳԿ1</u> վերլուծելու և սինթեզելու ունակություն,

<u>ԳԿ4</u> մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,

<u>ԳԿ9</u> խնդիրների լուծում,

<u>ԳԿ10</u> որոշումների ընդունում:

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

<u>ՀԳԿ1</u> գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

<u>ՀԳԿ2</u> հետազոտություններ կատարելու ունակություններ,

<u>ՀԳԿ3</u> սովորելու ունակություն,

<u>ՀԳԿ8</u> ինքնուրույն աշխատելու ունակություն,

<u>Բ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)</u>

<u>ԱԿ2</u> հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,

<u>ԱԿ4</u> ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

<u>ԱԿ6</u> կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,

<u>ԱԿ11</u> տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,

<u>ԱԿ14</u> տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

***5.* Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].**

---

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է

«Հայ գրականության պատմություն /19-րդ դար-2/» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել բանասիրական մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և բանասիրական բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	4 կրեդիտ/120 ժամ	4 կրեդիտ/120 ժամ

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ	ժամաքանակ
Դասախոսություն	26	6
Գործնական աշխատանք	22	10
Ինքնուրույն աշխատանք	72	104
Ընդամենը	120	120
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	Ընթացիկ քննություն	Ամփոփիչ քննություն

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

շրջանավարտը կիրառել :

[4] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:
  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝
  - **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
  - **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխ-նոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ հա-մացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
  - **Աշխատանքային տետր** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
  - **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք:

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

[5] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[6].

հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների		
		դասախոսություն	գործնական աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Հայ գրականությունը 19-րդ դ. 90-ական թվականներին։ Շիրվանզադեի կյանքն ու ստեղծագործությունը։	2	2	18
2.	Մուրացանի կյանքն ու ստեղծագործության բնութագիրը։		2	18
3.	Նար-Դոսի կյանքն ու ստեղծագործությունը։	2	2	18
4.	Հովհ. Հովհաննիսյանի պոեզիան։ Վրթ. Փափազյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը։		1	16
5.	Գր. Զոհրապը որպես նովելիստ։ Գր. Զոհրապի նովելաշարերը։	2	2	18
6.	Արփ. Արփիարյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը։ Կամսարականի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը		1	16
Ընդամենը		6	10	104

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Անտոնյան Գ., Արևմտահայ ռեալիստական արձակը	1939
2.	Ավետիսյան Զ., Հայ պատմավեպի պոետիկան	1986
3.	Բեքմեքզյան Ա., Վիպակի ժանրը հայ նոր գրականության մեջ	1984
4.	Հայ վեպի պատմություն	2005
5.	Հայ նոր գրականության պատմություն, 5 հատորով	1962-1979
6.	Մանուկյան Ս., Ասմարյան Լ., Ակնարկներ հայ գրականության պատմության	1984
7.	Ջրբաշյան Է., Աշխարհայացք և վարպետություն	1967
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Արսեն Տերտերյան, Շիրվանզադե	1911
2.	Արսեն Տերտերյան, Նար-Դոսի ստեղծագործությունը	1913
3.	Վաչե Պարտիզունի, Մուրացան /Կյանքն ու ստեղծագործությունը/	1956
4.	Նշան Մուրադյան, Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը	1964
5.	Ա. Օհանյան, Վրթանես Փափազյան	1976
6.	Ալբերտ Շարուրյան, Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն	1996
7.	Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում	2001
8.	Լ. Մուրադյան, Արփիար Արփիարյան. կյանքը և ստեղծագործությունը	1991
9.	Հ. Մարգարյան, Տիգրան Կամսարական: Կյանքը և ստեղծագործությունը	1964
Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)		
1.	Էլեկտրոնային ուսումնամեթոդական նյութեր	Բոլոր էլեկտրոնային ձևերը
2.	Տեսա- լսա- ֆոտո նյութեր	Բոլոր էլեկտրոնային ձևերը

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Գրականություն[7]
1.	Հայ գրականությունը 19-րդ դ. 90-ական թվականներին	Հայ հասարակական-տնտեսական կյանքը 90-ական թվականներին։ Հայ պարբերական մամուլը 90-ական թվականներին։ Հասարակական մտքի հոսանքները և գրական-հրապարակախոսական բախումները։ «Մշակ», «Մուրճ», «Նոր-դար» և ուրիշ թերթեր ու պարբերականներ։ Քննադատական ռեալիզմի առաջատար դիրքը և նվաճումները գրական նոր ժանրերում։ Հայ քննադատական ռեալիզմի բնորոշ գծերը։ Սոցիալական թեմատիկայի զարգացումը։	2	ՊԳ4, 5
2.	Շիրվանզադեի կյանքն ու գործունեությունը։ «Կյանքի բովից» վեպը։ Շիրվանզադեն իբրև դրամատուրգ, դրամաների ժանրային առանձնահատկությունները։	«Կյանքի Բովից» հուշագրությունը որպես կենսագրական աղբյուր։ Շիրվանզադեի ուսումնառության, աշխատանքի և որոնումների վաղ տարիները։ Շիրվանզադեն որպես հայ խոշորագույն ռեալիստ արձակագիր և դրամատուրգ, Շիրվանզադեի քննադատական ռեալիզմի առանձնահատկությունները։ Վեպերն ու պատմվածքները։ 80-ական թվականների նրա ստեղծագործությունները և բերած նորությունները. Ռաֆֆու ավանդները և Շիրվանզադեն։ Շիրվանզադեն իբրև դրամատուրգ. նրա բերած նորությունները այդ բնագավառում։ Դրամաների ժանրային առանձնահատկությունները։ «Եվգինե», «Ուներ իրավունք», «Արմենուհի» դրամաները։ Փողի վրա հիմնված բուրժուական ընտանիքի քննադատությունը։		ՊԳ4, 5 ԼԳ 1

3.	Գավառական թեման Շիրվանզադեի «Նամուս», «Չար ոգի» երկերում։ Մտավորականության թեման Շիրվանզադեի ստեղծագործություններում։ Ընտանիքի թեման Շիրվանզադեի ստեղծագործություններում։	Գավառական քաղաքի կյանքի պատկերը «Նամուս», «Չար ոգին» և «Ֆաթման ու Ասադը» երկերում։ «Նամուսը» վեպը որպես գեղարվեստական խոշոր նվաճում. վեպի կերպարները, գործողության դրամատիկ ընթացքը և հոգեբանական պատճառաբանվածությունը։ Կենցաղային վառ կոլորիտը։ «Չար ոգին» վիպակը. պաթոլոգիկ կերպարները վիպակում։ Զոլայական նատուրալիզմի ժխտման առողջ միտումը։ «Արամբին» վեպը. վեպի սյուժեն որպես իրականության մեջ բուրժուական ընտանեկան փոխհարաբերությունների բնորոշ արտահայտություն։ Նար-Դոսի կողմից այդ վեպի անարդար քննադատությունը։ Ընտանիքի թեման Շիրվանզադեի հետագա ստեղծագործությունների մեջ, հասարակական կյանքի ու ընտանիքի փոխհարաբերության հարցը։ Շիրվանզադեի հասարակական հայացքները. Շիրվանզադեն և կանանց ազատագրման խնդիրը։ Բուրժուական ընտանիքի քայքայման սոցիալական պատճառների արտացոլումը նրա երկերում։ «Մելանյա» վիպակը. Շիրվանզադեի մասնակի շեղումները ռեալիզմից. իդեալիստական մտածողության երանգները բուրժուական հասարակության պայմաններում կնոջ՝ անկախության ու ազատության հասնելու և ընտանիքը ամրացնելու հնարավորությունների պատկերման մեջ։ Մտավորականության թեման. «Նորերից մեկը» և «Կրակը» պատմվածքները։ Անհատի և հասարակության հարաբերության հարցը, այսպես կոչված «ավելորդ մարդկանց» քննադատությունը։ «Արսեն Դիմաքսյան» վեպը և նրա գաղափարական բովանդակությունը։		ՊԳ4, 5 ԼԳ 1
4.	Շիրվանզադեի «Քառս» վեպը, կառուցվածքը, կերպարային համակարգը։ Շիրվանզադեի «Պատվի համար» դրաման։	Շիրվանզադեի սոցիալական վեպերը և պատմվածքները։ «Քառս» վեպը որպես հայ քննադատական ռեալիզմի խոշորագույն նվաճում. վեպի հասարակական ընդգրկման խորությունը և լայնությունը։ Գեղարվեստական արժանիքները։ Բուրժուական կյանքի արտացոլումը վեպում։ Կերպարները։		ՊԳ4, 5 ԼԳ 1

		Բանվորական աշխարհը։ Մասսայական հաջող տեսարանները։ Վեպի մոնումենտալ կառուցվածքը։ Պատվի համար» դրաման։ Բուրժուազիայի հին և նոր սերնդի մարդկանց կերպարները։ Էլիզբարովի տիպը, շեքսպիրյան ավանդների հաջող օգտագործումը։ Հեղինակի հոգեբանական խոր դիտողությունների մեծ ունակությունը։ «Պատվի համար» դրաման սովետական բեմում։		
5.	Մուրացանի կյանքն ու ստեղծագործության բնութագիրը։ Գյուղը Մուրացանի երկերում։ Մուրացանի «Առաքյալ» վիպակը։ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպը։	Մուրացանի ինքնակենսագրությունը, ստեղծագործական կյանքի և առանձին գործերի գաղափարական Էության մասին տված նրա բացատրությունները։ «Ռուզան» դրամայի բերած նորությունները հայ պատմական դրամայի ասպարեզում։ Հայ գյուղին նվիրված գործերը՝ «Խորհրդավոր միանձնուհին», «Նոյի ագռավը», «Առաքյալը»։ Գյուղացիությանը տնտեսական ծանր դրությունից դուրս բերելու ուղիներն ըստ Մուրացանի. դրանց ռոմանտիկ-ուտոպիական բնույթը։ Գյուղական կյանքի հետամնացության ռեալիսական պատկերը և վերափոխման ռոմանտիկ հայացքները «Առաքյալը» վիպակում։ Վիպակի գեղարվեստական արժանիքները. Մուրացանի երգիծական տաղանդը։ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպը որպես հայ պատմավիպասանության գլուխգործոցներից մեկը, վեպի գեղարվեստական մեծ արժանիքները։ Պատմականության հարցը վեպում։ Ժողովրդի ազատագրման ու անկախության գաղափարը վեպում. Գևորգ Մարզպետունին որպես մեր դասական գրականության ամենահաջող գրական կերպարներից մեկը։ Պատմական մի շարք անձնավորությունների՝ Աշոտ Երկաթի, Հովհաննես Դրասխանակերտցու, Սահակ Սևադայի, Ցլիկ Ամրամի և մյուսների կերպարները։ Ընտանիքի և հասարակության հարաբերությունը վեպում Ռազմի զանգվածային տեսարանները։ Պատմական վառ կոլորիտը։ Վեպի լեզուն և ոճավորման բարձր արվեստը։		ՊԳ4, 5 ԼԳ 3

6.	Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարը։ «Պայքար» վեպը. տարբեր հոսանքները, մտավորականության կերպարները։	Նար-Դոսի ինքնակենսագրությունը։ Նար-Դոսը ռուս դասականներից իր ուսումնառության մասին։ Նար-Դոսի ռեալիզմի առանձնահատկությունները և բերած նորությունները։ «Նոր-դար» թերթին Նար-Դոսի աշխատակցելու հարցը։ Նար-Դոսի պատկերացումները գյուղի տնտեսական դրության բարելավման վերաբերյալ։ Բուրժուական իրականության քննադատությունը։ «Մեր թաղը» նովելաշարը։ Քաղաքի քայքայվող արհեստավորների կյանքի պատկերումը այդ նովելներում։ Կերպարները։ «Մշակ-նորդարական» պայքարի արտացոլումը Նար-Դոսի ստեղծագործության մեջ։ «Պայքար» վեպը, տարբեր հոսանքների մտավորականության կերպարները։ Մանեն, նրա ապրած ներքին պայքարը, վեպի միտումները։ Նար-Դոսի ստեղծագործական առանձնահատկությունները։ Հերոսների ներքին աշխարհի բնութագրումը, նրանց հոգեկան ապրումների պատկերումը։ Դրամատիկ հոգեվիճակների հարստությունը Նար-Դոսի ստեղծագործության մեջ։	2	ՊԳ4, 5 ԼԳ 2
7	«Մահը» վեպը. Նար-Դոսի քաղաքական հայացքները։ Նար-Դոսի վիպակները։	Մտավորականության և ընտանիքի թեման։ Բուրժուական հասարակության մեջ «ավելորդ» մտավորականի ողբերգությունը։ «Աննա Սարոյան» վիպակը։ «Սպանված աղավնին». Թուսյանի կերպարը, բուրժուական անկումայնության ընդհանրացումը նրա մեջ։ Սառայի կերպարը։ Վեպի ստեղծագործական պատմությունը։ «Մահը» վեպը. Նար-Դոսի քաղաքական հայացքները։ Շահյանի և Բազենյանի բացասական տիպերը։ Նար-Դոսի դրական իդեալը։ Դրական հերոսների՝ Մինասյանի և Արմենակի կերպարները։ Նար-Դոսի վարպետությունը հերոսների հոգեկան աշխարհը պատկերելու հարցում։ «Մահը» վեպի գեղարվեստական արժանիքները։ Վեպի ստեղծագործական պատմությունը։		ՊԳ4, 5 ԼԳ 2

		Նար-Դոսի լեզուն։ Նար-Դոսի ստեղծագործության խորհրդային շրջանը։		
8	Հովհ. Հովհաննիսյանի պոեզիան։ Հ. Հովհաննիսյանի հայրենասիրական բանաստեղծությունները։	Կյանքը։ Պոեզիայի բնորոշ կողմերը և հիմնական թեմաները։ Հովհաննիսյանի բերած նորությունները։ Նրա դերը հայ ռեալիստական պոեզիայի զարգացման մեջ։ Սոցիալական երևույթներն արտահայտող բանաստեղծությունները։ Գյուղացու վիճակի պատկերումը։ Հովհաննիսյանը իբրև սիրո երգիչ. անձնականը հասարակականին ենթարկելու մոտիվը։ Հովհաննիսյանի հայրենասիրական բանաստեղծությունները. պատմական անցյալի նկատմամբ Հովհաննիսյանի վերաբերմունքը։ Բալլադները։ Հովհաննիսյանի լավատեսությունը։ Հովհաննիսյանի բանաստեղծական արվեստը. նրա ստեղծագործությունը և ժողովրդական բանահյուսությունը։ Հովհաննիսյանը որպես թարգմանիչը։ Հովհաննիսյանը և հայ հետագա գրականությունը։ Հովհաննիսյանի դերը հայ պոեզիայի լեզվի զարգացման հարցում։ Հովհաննիսյանի գործունեությունը խորհրդային տարիներին։		ՊԳ4, 5 ԼԳ 4
9	Վրթ. Փափազյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը։ Վրթ. Փափազյանի այլաբանական զրույցները; Վրթ. Փափազյանը որպես դրամատուրգ։ «Ժայռը» դրաման։	Կյանքը և գրական, հասարակական գործունեությունը։ Փափազյանի աշխարհայացքի հակասությունները և նրա կրած ազդեցությունների հարցը։ Փափազյանի ստեղծագործության ժանրերը։ Փափազյանը և Ռաֆֆին։ Փափազյանի բերած նորությունները, ներքին կեղեքիչների՝ առևտրավաշխառուական և հոգևորական խավերի կերպարները։ Փափազյանը որպես հայ առաջին խոշոր ակնարկագիր։ Փափազյանի «Զրույցները» որպես ժանրային նորություն հայ գրականության մեջ։ «Զրույցների» մեջ փոխաբերաբար արտահայտված քաղաքական միտումները։		ՊԳ4, 5 ԼԳ 5

		Գորկու ազդեցությունը Փափազյանի վրա։ «Պատկերներ գյուղից» շարքում տեղ գտած պատմվածքների և ակնարկների ներքին կապն ու միասնությունը։ Հայ գյուղի կյանքի ռեալիստական պատկերը։ «Ժայռ» պիեսը. Գրիգոր աղայի և Ալեքսանդրի կերպարները, պիեսի գաղափարը և գեղարվեստական արժանիքները։ Փափազյանը իբրև պատմավիպասան. «Ասի», «Ալեմզիր» և «Ազերֆեզա» վեպերը Փափազյանի ստեղծագործությունները ռեակցիայի տարիներին. «Ծովափին» պատմվածքը՝ ինտելիգենցիայի որոշ խավերի մեջ եղած անկումայնության քննադատությունը։ Փափազյանը որպես պատմաբան։ Փափազյանը իբրև գրականության պատմաբան։ Նրա «Հայ գրականության պատմություն» գրքի արժեքն ու տեղը մեր անցյալի գրականագիտության մեջ։		
11	Գր. Զոհրապը որպես նովելիստ։ Գր. Զոհրապի նովելաշարերը։	Զոհրապը որպես խոշոր նովելիստ։ Կյանքը և հասարակական գործունեությունը։ Զոհրապի առաջին երկերը։ «Անհետացող սերունդ մը» վեպը։ Զոհրապի նովելները։ «Խղճմտանքի ձայներ», «Կյանքն ինչպես որ է» և «Լուռ ցավեր» խորագրով Ժողովածուները. այդ խորագրերի իմաստը։ Զոհրապի ռեալիզմի առանձնահատկությունները։ Նովելների գաղափարական բովանդակության հիմնական գծերը։ Քաղաքական համոզմունքների արտահայտությունը նովելներում, բուրժուական իրականության մեջ եղած սոցիալական խտրականության խիստ քննադատությունը. Զոհրապի բուռն ատելությունը քաղքենիության և եկեղեցականության նկատմամբ, նրա ջերմ համակրանքը բուրժուական աշխարհի զոհերի նկատմամբ։ Սիրո թեմային նվիրված նովելները որպես բուրժուական գորշ իրականությունից և քաղքենի միջավայրի գռեհկություններից վեց բարձրանալու և դրանց հակադրվելու արտահայտություններ. «Երջանիկ մահ», «Ճեյրան», «Ճոկո» և	2	ՊԳ4, 5 ԼԳ 6, 7

		այլն։ Զոհրապի նովելների գեղարվեստական խոշոր արժանիքները։ Հոգեբանական նուրբ դիտողություններ կատարելու և ինքնատիպ հոգեվիճակներ պատկերելու նրա մեծ կարողությունը։ Միստիկայի որոշ երանգներ նրա ստեղծագործության մեջ և ռեալիզմից շեղվելու փաստեր։ Զոհրապը իբրև նովելի ձևի խոշորագույն վարպետ։ Նովելների ժանրային առանձնահատկությունները։ Զոհրապի լեզուն։		
12	Արփ. Արփիարյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	Կյանքը և հասարակական գործունեությունը։ Արփիարյանը որպես հրապարակախոս. նրա թղթակցությունը «Մշակին»։ Արփիարյանը իբրև արձակագիր, նրա «Կյանքի պատկերներ» նովելների շարքը։ Արփիարյանը իբրև ռեալիզմի տեսաբան. Արփիարյանի քննադատական հայացքները. նրա կողմից ռուս գրականության պրոպագանդան արևմտահայ իրականության մեջ։ Արփիարյանի տատանումները դեպի լիբերալիզմ։ «Կարմիր ժամուց» վիպակը և նրա գաղափարական բովանդակությունը։ Արփիարյանի գեղարվեստական վերջին գործերը. «Մինչև երբ» և «Ոսկե ապարանջան»։ Արփիարյանը և 1905 թվականի հեղափոխությունը։		ՊԳ4, 5 ԼԳ 8
13	Կամսարականի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	Կյանքը և առաջին գեղարվեստական երկը՝ «Վարժապետին աղջիկը» վեպը։ Հեղինակի դեմոկրատական հակումները. բուրժուական «նոր սերնդի» ցոփ բարքերի մերկացումները։ Վեպի գեղարվեստական արժանիքները կերպարները։ Սենտիմենտալ տարրերը հեղինակի քննադատության մեջ։ Կամսարականի պատմվածքները. «Հարոն», «Հովկուլը» և այլն։ Դրանց սյուժետային կառուցվածքի ինքնատիպությունը։ Հեղինակի համակրանքը բուրժուական հասարակության զոհերի նկատմամբ։		ՊԳ 4, 5 ԼԳ 9

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

h/h	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Ստուգման ձևը	Գրականություն[8]
1.	Շիրվանզադեի կյանքն ու գործունեությունը: «Կյանքի բովից» վեպը: Շիրվանզադեն իբրև դրամատուրգ, դրամաների ժանրային առանձնահատկությունները:	«Կյանքի Բովից» հուշագրությունը որպես կենսագրական աղբյուր: Շիրվանզադեի ուսումնառության, աշխատանքի և որոնումների վաղ տարիները: Շիրվանզադեն որպես հայ խոշորագույն ռեալիստ արձակագիր և դրամատուրգ, Շիրվանզադեի քննադատական ռեալիզմի առանձնահատկությունները: Վեպերն ու պատմվածքները: 80-ական թվականների նրա ստեղծագործությունները և բերած նորությունները. Ռաֆֆու ավանդները և Շիրվանզադեն: Շիրվանզադեն իբրև դրամատուրգ. նրա բերած նորությունները այդ բնագավառում: Դրամաների ժանրային առանձնահատկությունները: «Եվգինե», «Ուներ իրավունք», «Արմենուհի» դրամաները: Փողի վրա հիմնված բուրժուական ընտանիքի քննադատությունը:	2	Ֆրոնտալ հարցում	ՊԳ4, 5 ԼԳ 1
2.	Գավառական թեման Շիրվանզադեի «Նամուս», «Չար ոգի» երկերում: Մտավորականության թեման Շիրվանզադեի ստեղծագործություններում:	Գավառական քաղաքի կյանքի պատկերը «Նամուս», «Չար ոգին» և «Ֆաթման ու Ասադը» երկերում: «Նամուսը» վեպը որպես գեղարվեստական խոշոր նվաճում. վեպի կերպարները, գործողության դրամատիկ ընթացքը և հոգեբանական պատճառաբանվածությունը: Կենցաղային վառ		Համակուրսային քննարկում	ՊԳ4, 5 ԼԳ 1

[8] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

	Ընտանիքի թեման Շիրվանզադեի ստեղծագործություններում:	կոլորիտը: «Չար ոգին» վիպակը. պաթոլոգիկ կերպարները վիպակում: Զոլայական նատուրալիզմի ժխտման առողջ միտումը: «Արամբին» վեպը. վեպի սյուժեն որպես իրականության մեջ բուրժուական ընտանեկան փոխհարաբերությունների բնորոշ արտահայտություն: Նար-Դոսի կողմից այդ վեպի անարդար քննադատությունը: Ընտանիքի թեման Շիրվանզադեի հետագա ստեղծագործությունների մեջ, հասարակական կյանքի ու ընտանիքի փոխհարաբերության հարցը: Շիրվանզադեի հասարակական հայացքները. Շիրվանզադեն և կանանց ազատագրման խնդիրը: Բուրժուական ընտանիքի քայքայման սոցիալական պատճառների արտացոլումը նրա երկերում: «Մելանյա» վիպակը. Շիրվանզադեի մասնակի շեղումները ռեալիզմից. իդեալիստական մտածողության երանգները բուրժուական հասարակության պայմաններում կնոջ՝ անկախության ու ազատության հասնելու և ընտանիքը ամրացնելու հնարավորությունների պատկերման մեջ: Մտավորականության թեման. «Նորերից մեկը» և «Կրակը» պատմվածքները: Անհատի և հասարակության հարաբերության հարցը, այսպես կոչված «ավելորդ մարդկանց» քննադատությունը: «Արսեն Դիմաքսյան» վեպը և նրա գաղափարական բովանդակությունը:			
3.	Շիրվանզադեի «Քառս» վեպը, կառուցվածքը, կերպարային համակարգը: Շիրվանզադեի «Պատվի համար» դրաման:	Շիրվանզադեի սոցիալական վեպերը և պատմվածքները: «Քառս» վեպը որպես հայ քննադատական ռեալիզմի խոշորագույն նվաճում. վեպի հասարակական ընդգրկման խորությունը և լայնությունը: Գեղարվեստական արժանիքները: Բուրժուական կյանքի արտացոլումը վեպում: Կերպարները: Բանվորական աշխարհը: Մասսայական հաջող տեսարանները: Վեպի մոնումենտալ կառուցվածքը: Պատվի համար» դրաման: Բուրժուազիայի հին և նոր սերնդի մարդկանց կերպարները: Էլիզբարովի տիպը, շեքսպիրյան ավանդների հաջող օգտագործումը: Հեղինակի հոգեբանական խոր		Ֆրոնտալ հարցում	ՊԳ4, 5 ԼԳ 1

		դիտողությունների մեծ ունակությունը։ «Պատվի համար» դրաման սովետական բեմում։			
4.	Մուրացանի կյանքն ու ստեղծագործության բնութագիրը։ Գյուղը Մուրացանի երկերում։ Մուրացանի «Առաքյալ» վիպակը։ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպը։	Մուրացանի ինքնակենսագրությունը, ստեղծագործական կյանքի և առանձին գործերի գաղափարական էության մասին տված նրա բացատրությունները։ «Ռուզան» դրամայի բերած նորությունները հայ պատմական դրամայի ասպարեզում։ Հայ գյուղին նվիրված գործերը՝ «Խորհրդավոր միանձնուհին», «Նոյի ագռավը», «Առաքյալը»։ Գյուղացիությանը տնտեսական ծանր դրությունից դուրս բերելու ուղիներն ըստ Մուրացանի. դրանց ռոմանտիկ-ուտոպիական բնույթը։ Գյուղական կյանքի հետամնացության ռեալիսական պատկերը և վերափոխման ռոմանտիկ հայացքները «Առաքյալը» վիպակում։ Վիպակի գեղարվեստական արժանիքները. Մուրացանի երգիծական տաղանդը։ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպը որպես հայ պատմավիպասանության գլուխգործոցներից մեկը, վեպի գեղարվեստական մեծ արժանիքները։ Պատմականության հարցը վեպում։ ժողովրդի ազատագրման ու անկախության գաղափարը վեպում. Գևորգ Մարզպետունին որպես մեր դասական գրականության ամենահաջող գրական կերպարներից մեկը։ Պատմական մի շարք անձնավորությունների՝ Աշոտ Երկաթի, Հովհաննես Դրասխանակերտցու, Սահակ Սևադայի, Ցլիկ Ամրամի և մյուսների կերպարները։ Ընտանիքի և հասարակության հարաբերությունը վեպում Ռազմի զանգվածային տեսարանները։ Պատմական վառ կոլորիտը։ Վեպի լեզուն և ոճավորման բարձր արվեստը։	2	Համակուրսային քննարկում	ՊԳ4, 5 ԼԳ 3
5.	Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարը։ «Պայքար» վեպը. տարբեր հոսանքները, մտավորականության կերպարները։	Նար-Դոսի ինքնակենսագրությունը։ Նար-Դոսը ռուս դասականներից իր ուսումնառության մասին։ Նար-Դոսի ռեալիզմի առանձնահատկությունները և բերած նորությունները։ «Նոր-դար» թերթին Նար-Դոսի աշխատակցելու հարցը։ Նար-Դոսի պատկերացումները գյուղի տնտեսական դրության	2	Ֆրոնտալ հարցում	ՊԳ4, 5 ԼԳ 2

		բարելավման վերաբերյալ։ Բուրժուական իրականության քննադատությունը։ «Մեր թաղը» նովելաշարը։ Քաղաքի քայքայվող արհեստավորների կյանքի պատկերումը այդ նովելներում։ Կերպարները։ «Մշակ-նորդարական» պայքարի արտացոլումը Նար-Դոսի ստեղծագործության մեջ։ «Պայքար» վեպը, տարբեր հոսանքների մտավորականության կերպարները։ Մանեն, նրա ապրած ներքին պայքարը, վեպի միտումները։ Նար-Դոսի ստեղծագործական առանձնահատկությունները։ Հերոսների ներքին աշխարհի բնութագրումը, նրանց հոգեկան ապրումների պատկերումը։ Դրամատիկ հոգեվիճակների հարստությունը Նար-Դոսի ստեղծագործության մեջ։			
6.	«Մահը» վեպը. Նար-Դոսի քաղաքական հայացքները։ Նար-Դոսի վիպակները։	Մտավորականության և ընտանիքի թեման։ Բուրժուական հասարակության մեջ «ավելորդ» մտավորականի ողբերգությունը։ «Աննա Սարոյան» վիպակը։ «Սպանված աղավնին». Թուսյանի կերպարը, բուրժուական անկումայնության ընդհանրացումը նրա մեջ։ Սառայի կերպարը։ Վեպի ստեղծագործական պատմությունը։ «Մահը» վեպը. Նար-Դոսի քաղաքական հայացքները։ Շահյանի և Բազենյանի բացասական տիպերը։ Նար-Դոսի դրական իդեալը։ Դրական հերոսների՝ Մինասյանի և Արմենակի կերպարները։ Նար-Դոսի վարպետությունը հերոսների հոգեկան աշխարհը պատկերելու հարցում։ «Մահը» վեպի գեղարվեստական արժանիքները։ Վեպի ստեղծագործական պատմությունը։ Նար-Դոսի լեզուն։ Նար-Դոսի ստեղծագործության խորհրդային շրջանը։		Քննարկում	ՊԳ4, 5 ԼԳ 2
7.	Հովհ. Հովհաննիսյանի պոեզիան։ Հ. Հովհաննիսյանի հայրենասիրական բանաստեղծությունները։	Կյանքը։ Պոեզիայի բնորոշ կողմերը և հիմնական թեմաները։ Հովհաննիսյանի բերած նորությունները։ Նրա դերը հայ ռեալիստական պոեզիայի զարգացման մեջ։ Սոցիալական երևույթներն արտահայտող բանաստեղծությունները։ Գյուղացու վիճակի պատկերումը։	1	Համակուրսային քննարկում	ՊԳ4, 5 ԼԳ 4

		Հովհաննիսյանը իբրև սիրո երգիչ. անձնականը հասարակականին ենթարկելու մոտիվը։ Հովհաննիսյանի հայրենասիրական բանաստեղծությունները. պատմական անցյալի նկատմամբ Հովհաննիսյանի վերաբերմունքը։ Բալլադները։ Հովհաննիսյանի լավատեսությունը։ Հովհաննիսյանի բանաստեղծական արվեստը. նրա ստեղծագործությունը և ժողովրդական բանահյուսությունը։ Հովհաննիսյանը որպես թարգմանիչը։ Հովհաննիսյանը և հայ հետագա գրականությունը։ Հովհաննիսյանի դերը հայ պոեզիայի լեզվի զարգացման հարցում։ Հովհաննիսյանի գործունեությունը խորհրդային տարիներին։			
8.	Վրթ. Փափազյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը։ Վրթ. Փափազյանի այլաբանական զրույցները; Վրթ. Փափազյանը որպես դրամատուրգ։ «Ժայռը» դրաման։	Կյանքը և գրական, հասարակական գործունեությունը։ Փափազյանի աշխարհայացքի հակասությունները և նրա կրած ազդեցությունների հարցը։ Փափազյանի ստեղծագործության ժանրերը։ Փափազյանը և Ռաֆֆին։ Փափազյանի բերած նորությունները, ներքին կեղեքիչների՝ առևտրավաշխառուական և հոգևորական խավերի կերպարները։ Փափազյանը որպես հայ առաջին խոշոր ակնարկագիր։ Փափազյանի «Զրույցները» որպես ժանրային նորություն հայ գրականության մեջ։ «Զրույցների» մեջ փոխաբերաբար արտահայտված քաղաքական միտումները։ Գորկու ազդեցությունը Փափազյանի վրա։ «Պատկերներ գյուղից» շարքում տեղ գտած պատմվածքների և ակնարկների ներքին կապն ու միասնությունը։ Հայ գյուղի կյանքի ռեալիստական պատկերը։ «Ժայռ» պիեսը. Գրիգոր աղայի և Ալեքսանդրի կերպարները, պիեսի գաղափարը և գեղարվեստական արժանիքները։ Փափազյանը իբրև պատմավիպասան. «Ասի», «Ալեմգիր» և «Ազերֆեզա» վեպերը Փափազյանի ստեղծագործությունները ռեակցիայի տարիներին. «Ծովափին» պատմվածքը՝ ինտելիգենցիայի որոշ խավերի մեջ եղած		Համակուրսային քննարկում	ՊԳ4, 5 ԼԳ 5

		անկումայնության քննադատությունը: Փափազյանը որպես պատմաբան: Փափազյանը իբրև գրականության պատմաբան: Նրա «Հայ գրականության պատմություն» գրքի արժեքն ու տեղը մեր անցյալի գրականագիտության մեջ:			
9.	Գր. Զոհրապը որպես նովելիստ: Գր. Զոհրապի նովելաշարերը:	Զոհրապը որպես խոշոր նովելիստ: Կյանքը և հասարակական գործունեությունը: Զոհրապի առաջին երկերը: «Անհետացող սերունդ մը» վեպը: Զոհրապի նովելները: «Խղճմտանքի ձայներ», «Կյանքն ինչպես որ Է» և «Լուռ ցավեր» խորագրով Ժողովածուները. այդ խորագրերի իմաստը: Զոհրապի ռեալիզմի առանձնահատկությունները: Նովելների գաղափարական բովանդակության հիմնական գծերը: Քաղաքական համոզմունքների արտահայտությունը նովելներում, բուրժուական իրականության մեջ եղած սոցիալական խտրականության խիստ քննադատությունը. Զոհրապի բուռն ատելությունը քաղքենիության և եկեղեցականության նկատմամբ, նրա ջերմ համակրանքը բուրժուական աշխարհի զոհերի նկատմամբ: Սիրո թեմային նվիրված նովելները որպես բուրժուական գորշ իրականությունից և քաղքենի միջավայրի գռեհկություններից վեց բարձրանալու և դրանց հակադրվելու արտահայտություններ. «Երջանիկ մահ», «Ճեյրան», «Ճոկո» և այլն: Զոհրապի նովելների գեղարվեստական խոշոր արժանիքները: Հոգեբանական նուրբ դիտողություններ կատարելու և ինքնատիպ հոգեվիճակներ պատկերելու նրա մեծ կարողությունը: Միստիկայի որոշ երանգներ նրա ստեղծագործության մեջ և ռեալիզմից շեղվելու փաստեր: Զոհրապը իբրև նովելի ձևի խոշորագույն վարպետ: Նովելների ժանրային առանձնահատկությունները: Զոհրապի լեզուն:	2	Բանավոր հարցում	ՊԳ4, 5 ԼԳ 6, 7
10.	Արփ. Արփիարյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	Կյանքը և հասարակական գործունեությունը: Արփիարյանը որպես հրապարակախոս. նրա թղթակցությունը «Մշակին»: Արփիարյանը իբրև արձակագիր, նրա «Կյանքի պատկերներ» նովելների շարքը:	1	Համակուրսային քննարկում	ՊԳ4, 5 ԼԳ 8

		Արփիարյանը իբրև ռեալիզմի տեսաբան. Արփիարյանի քննադատական հայացքները. նրա կողմից ռուս գրականության պրոպագանդան արևմտահայ իրականության մեջ։ Արփիարյանի տատանումները դեպի լիբերալիզմ։ «Կարմիր ժամուց» վիպակը և նրա գաղափարական բովանդակությունը։ Արփիարյանի գեղարվեստական վերջին գործերը. «Մինչև երբ» և «Ոսկե ապարանջան»։ Արփիարյանը և 1905 թվականի հեղափոխությունը։			
11.	Կամսարականի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	Կյանքը և առաջին գեղարվեստական երկը՝ «Վարժապետին աղջիկը» վեպը։ Հեղինակի դեմոկրատական հակումները. բուրժուական «նոր սերնդի» ցոփ բարքերի մերկացումները։ Վեպի գեղարվեստական արժանիքները կերպարները։ Սենտիմենտալ տարրերը հեղինակի քննադատության մեջ։ Կամսարականի պատմվածքները. «Հարոն», «Հովկուլը» և այլն։ Դրանց սյուժետային կառուցվածքի ինքնատիպությունը։ Հեղինակի համակրանքը բուրժուական հասարակության զոհերի նկատմամբ։		Բանավոր հարցում	ՊԳ4, 5 ԼԳ 9

12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

Հ/Հ	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Աշխատանքի տեսակը[9]	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն[10]
1.	Գավառական թեման Շիրվանզադեի «Նամուս», «Չար ոգի» երկերում	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 1

[9] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը։
[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն։

2.	Ընտանիքի թեման Շիրվանզադեի ստեղծագործություններում	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 1
3.	Շիրվանզադեի «Քառս» վեպը	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 1
4.	Գյուղը Մուրացանի երկերում	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 3
5.	Կանանց կերպարները «Գևորգ մարզպետունի» վեպում	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 3
6.	«Պայքար» վեպը. տարբեր հոսանքները մտավորականության կերպարները	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 2
7.	Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարը	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 2
8.	Հովի. Հովհաննիսյանի պոեզիան	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Կիսամյակի ընթացքում	ՊԳ4, 5 ԼԳ 4
9.	Վրթ. Փափազյանի այլաբանական զրույցները	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Կիսամյակի ընթացքում	ՊԳ4, 5 ԼԳ 5
10.	Գր. Զոհրապի նովելաշարերը: «Խղճմտանքի ձայներ»	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 6, 7
11.	Գր. Զոհրապի նովելաշարերը: «Կյանքն ինչպես որ է»	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 6, 7
12.	Գր. Զոհրապի նովելաշարերը: «Լուր ցավեր»	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 6, 7

13.	«Կարմիր ժամուց» վիպակը:	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 8
14.	«Վարժապետին աղջիկը» վեպը:	ռեֆերատ	Կիսամյակի ընթացքում	Բանավոր պատասխան	ՊԳ4, 5 ԼԳ 9

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[11]

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	-
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	
Սարքեր, սարքավորումներ	
Համակարգչային ծրագրեր	
Այլ	

[11] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար:

14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[12]:

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ամփոփիչ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ամփոփիչ քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Շիրվանզադեի կյանքն ու գործունեությունը:
2. Գավառական թեման Շիրվանզադեի «Նամուս», «Չար ոգի» երկերում:

---

[12] «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.06.2022թ.):

3. Մտավորականության թեման Շիրվանզադեի ստեղծագործություններում:
4. Ընտանիքի թեման Շիրվանզադեի ստեղծագործություններում:
5. Շիրվանզադեի սոցիալական վեպերն ու պատմվածքները:
6. Շիրվանզադեի «Քառս» վեպը:
7. «Քառս» վեպի կառուցվածքը:
8. «Քառս» վեպի կերպարները:
9. «Քառս» վեպի գեղարվեստական արժանիքները:
10. Շիրվանզադեն իբրև դրամատուրգ, դրամաների ժանրային առանձնահատկությունները:
11. Շիրվանզադեի «Պատվի համար» դրաման:
12. Հին և նոր սերնդի մարդկանց կերպարները «Պատվի համար» դրամայում:
13. Շիրվանզադեի ռեալիզմի առանձնահատկությունները:
14. Մուրացանի կյանքն ու ստեղծագործական բնութագիրը:
15. Գյուղը Մուրացանի երկերում:
16. «Առաքյալը» վիպակը:
17. Երգիծանքը «Առաքյալը» վիպակում:
18. «Առաքյալը» վիպակի կերպարները:
19. «Առաքյալը» վիպակի գեղարվեստական արժանիքները:
20. Մուրացանի «Գևորգ մարզպետունի» վեպը:
21. «Գևորգ մարզպետունի» վեպի գաղափարական բովանդակությունը:
22. «Գևորգ մարզպետունի» վեպ ի կերպարները
23. Կանանց կերպարները «Գևորգ մարզպետունի» վեպում
24. Մուրացանի ռոմանտիզմի առանձնահատկությունները:
25. Նար-Դոսի ռեալիզմի առանձնահատկությունները:
26. Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարը:
27. «Պայքար» վեպը. տարբեր հոսանքները մտավորականության կերպարները:
28. «Մահը» վեպը. Նար-Դոսի քաղաքական հայացքները:
29. Նար-Դոսի «Սպանված աղավնին» վեպը. վեպի կերպարները:
30. Հովհ. Հովհաննիսյանի պոեզիան:
31. Հովհ. Հովհաննիսյանի հայրենասիրական բանաստեղծությունները:
32. Վրթ. Փափազյանի այլաբանական զրույցները:
33. Վրթ. Փափազյանը որպես դրամատուրգ: «Ժայռը» դրաման:
34. 90-ական թթ. հայ «Գյուղագիր» արձակագիրները:
35. Գր. Զոհրապը որպես նովելիստ:
36. Գր. Զոհրապի նովելաշարերը: «Խղճմտանքի ձայներ», «Կյանքն ինչպես որ է», «Լուր ցավեր» խորագրով:
37. Սիրո թեման Գր. Զոհրապի նովելներում:
38. Զոհրապի թեմաների գեղարվեստական արժանիքները:
39. Սոցիալական թեման Զոհրապի նովելներում:
40. Նովելների ժանրային առանձնահատկությունները:
41. Արփիար Արփիարյան. «Ապուշը», «Դատապարտյալը», «Կատակ մը»
42. «Կարմիր ժամուց» վիպակը:
43. Տիգրան կամսարական. «Վարժապետին աղջիկը» վեպը:

14.4. Գնահատման չափանիշները[13].

- Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ամփոփիչ ստուգման ժամանակ ։
- Գործնական աշխատանքները՝ երեք հարցում՝ գումարային 40 միավորով։
- Ինքնուրույն աշխատանքը՝ մեկ հարցում՝ 20 միավոր գնահատմամբ։

[13] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման։

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ 011401.00.6-Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.19.6-Հայոց լեզու և գրականություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը

Որակավորման աստիճան՝ _ Մանկավարժության բակալավր_____

Վանաձոր 2023

Հեռակա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՀԼԳ /բ -065 Հայ գրականության պատմություն-19-րդ դար**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	3-րդ տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	16	Դասախոսություն	6
			Գործնական աշխատանք	10
	Ինքնուրույն	104		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	Ամփոփիչ քննություն			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է գրականության պատմություն զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին: ▪ Գրապատմական չափանիշների հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ: ▪ Դասընթացում կարևորվում են համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից: ▪ Ձեռք բերված գիտելիքները վերլուծելու կարողությունների ձևավորում տարբեր իրավիճակներում:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* Իմանալ 19-րդ դարի երկրորդ կեսի գրականության զարգացման ընթացքը, պատմաքաղաքական ժամանակահատվածը, հիմնական հեղինակներին և նրանց ստեղծագործությունը: *Հմտություն* Տիրապետել գրական գործընթացը մասնավոր հեղինակներով վերլուծության ենթարկելու հմտությանը: *Կարողունակություն* Կարողանալ վերլուծության ենթարկել հանձնարարված երկերը:			
Դասընթացի բովանդակությունը	*Թեմա 1.* Հայ գրականությունը 19-րդ դ. 90-ական թվականներին: Շիրվանզադեի կյանքն ու ստեղծագործությունը: *Թեմա 2.* Մուրացանի կյանքն ու ստեղծագործության բնութագիրը: *Թեմա 3.* Նար-Դոսի կյանքն ու ստեղծագործությունը:			

	Թեմա 4. Հովհ. Հովհաննիսյանի պոեզիան: Վրթ. Փափազյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: *Թեմա 5.* Գր. Զոհրապը որպես նովելիստ: Գր. Զոհրապի նովելաշարերը: *Թեմա 6.* Արփ. Արփիարյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Կամսարականի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
Գնահատման մեթոդները և չափանիշները	Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ամփոփիչ ստուգման ժամանակ : Գործնական աշխատանքները՝ երեք հարցում՝ գումարային 40 միավորով: Ինքնուրույն աշխատանքը՝ մեկ հարցում՝ 20 միավոր գնահատմամբ:
Գրականություն	***Պարտադիր*** Անտոնյան Գ., Արևմտահայ ռեալիստական արձակը Ավետիսյան Զ., Հայ պատմավեպի պոետիկան Բեքմեքզյան Ա., Վիպակի ժանրը հայ նոր գրականության մեջ Հայ վեպի պատմություն Հայ նոր գրականության պատմություն, 5 հատորով Մանուկյան Ս., Ասմարյան Լ., Ակնարկներ հայ գրականության պատմության Զրբաշյան Է., Աշխարհայացք և վարպետություն ***Լրացուցիչ*** Արսեն Տերտերյան, Շիրվանզադե Արսեն Տերտերյան, Նար-Դոսի ստեղծագործությունը Վաչե Պարտիզունի, Մուրացան /Կյանքն ու ստեղծագործությունը/ Նշան Մուրադյան, Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը Ա. Օհանյան, Վրթանես Փափազյան Ալբերտ Շարուրյան, Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն Գրիգոր Զօհրապը ժամանակակիցների յուշերում Լ. Մուրադյան, Արփիար Արփիարյան. կյանքը և ստեղծագործությունը Հ. Մարգարյան, Տիգրան Կամսարական: Կյանքը և ստեղծագործությունը